ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հունիսի 28-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխությունների առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված 550 հատ լազերային տպիչներից 100 հատ լազերային տպիչների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխությունների նկարագրություն՝

Պայմանագրի Հավելված N 2-ով նախատեսված 550 հատ լազերային տպիչներից 100 հատ լազերային տպիչների մասով մատակարարման ժամկետը սահմանվել է մինչև 2023թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ:

Պայմանագրի շրջանակում 16.06.2023թ. կնքված N 2 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարվել է լրացում:

Փոփոխությունների հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 28.06.2022թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ 16.06.2023Թ. ԿՆՔՎԱԾ N 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 12 » դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 28.06.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի **111 375 000 (մեկ հարյուր տասնմեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար)** ՀՀ դրամ ընդհանուր գնից Պայմանագրի Հավելված N 2-ով նախատեսված 550 հատ լազերային տպիչներից 100 հատ լազերային տպիչների մասով **20 250 000 (քսան միլիոն երկու հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի Հավելված N 2-ով նախատեսված 550 հատ լազերային տպիչներից 100 հատ լազերային տպիչների մասով մատակարարման ժամկետը սահմանել մինչև 2023թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ:

1.2. Պայմանագրի շրջանակում 16.06.2023թ. կնքված N 2 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարել լրացում՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ՝ 00861057
Հ/Հ՝ 1660000446270100
«ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն Կ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 3
«28» «06» 2022թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-1» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
900011005841															
1	30232110/2	Լազերային տպիչներ	-	-	-	-	-	-	20 250 000	20 250 000	20 250 000	20 250 000	20 250 000	20 250 000	**20 250 000**
900011025757															
1	30232110/4	Լազերային տպիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	20 250 000	20 250 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ՝ 00861057
Հ/Հ՝ 1660000446270100
«ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն Կ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ